ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՑ ԱՊՐԻԼԻ 13-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Սարգիս Առաքելյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2026 թվականի հունվարի 13-ից ապրիլի 13-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ արդարադատության բնագավառի աշխատողների արհեստակցական կազմակերպության կանոնադրության մշակման աշխատանքներին՝ կատարելով փոփոխություններ, ներկայացնելով առաջարկներ՝ նոր կետեր ավելացնելու և բարելավելու վերաբերյալ:

2. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

3. Մասնակցել և աջակցել եմ այլ վարչությունների աշխատանքներին՝ իրականացնելով միջազգային փորձի ուսումնասիրություն, մասնավորապես՝ անվան և ազգանվան փոփոխության գործընթացների, լսումների փուլերի, ինչպես նաև կամավորական կազմակերպությունների և կամավորների գործունեության և այլ հարակից հարցերի վերաբերյալ:

4. Մասնակցել եմ վերոշարադրյալ հարցերի վերաբերյալ քննարկումներին՝ ներկայացնելով առաջարկներ:

5. Ուսումնասիրել և գնահատել եմ քաղաքացիների ներկայացրած զեկույցները՝ կազմելով համապատասխան եզրակացություններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Սարգիս Առաքելյան

13.04.2026թ.